հարկանել դան յաւելի քանթէ երկոտասան դալար փայտիւ 'ի տեղի փափուկ մսի, որ ոսկը նորայ մի՛ փշրեսցի և եթէ սպասաւոր կամ աղախին երկոտասան դանիւն մի՛ գտցի կառավարեալ տացի 'ի ձեռն իշխանին տեղի բնակութեան իւրեանց, զի իշխան այնմիկ պատժեսցէ ըստ արժանեաց մեղաց նոցայ։

ԳԼՈՒԽ ՃԺԶ.

Ամենայն սպասաւոր և կամ աղախին եթէ գուցէ զի մի՛ գտցի 'ի տանէն Տեառնէ և կամ տիկնոջէ իւրմէ բաւական կերակուր, հանդերձ, ոռճիկ ըստ համեմատութեան դաշնադրութեան իւրոյ մինչ երիս ամիսս աղատ լինի 'ի դաշնադրութեան սպասաւորութենէ իւրմէ կարող է առաջ քան զլրումն ժամանակի խոստման իւրոց ելանել ուր և ինքն կամի։

ԳԼՈՒԽ ՃԺԷ.

Մէջ ամենայն աշխարհին 'ի յերեսս երկրին հայոց լինիցի տուն ողորմութեան զի հովանաւորեսցէ կաղ և կուրս և ամենայն անկարս։

ԳԼՈՒԽ ՃԺԸ.

Ամենայն ոք որ կամեսցի տալ ողորմութիւն եթէ տնանկի, եթէ որբի և տկարաց՝ տացէ առ տանն ողորմութեան։